

ԱԶԳԱՅԻՆ

ՀՐԱԿԵՐ ՀԱՅ ԱԶԳԻՆ

«Արձագանք» պատուական և արդիւնաւոր շաբաթաթերթի մէջ 1884 թուին, Յունիսի 24-ին 24 համարում «Հրաւեր հայ ազգին» վերնագրով մի յօդուած էր տպաւած։ «Արձագանք» պատուական շաբաթաթերթի յարգելի խմբագիր մեծ Պ. Արգար Յովհաննիսեան իրրե Վրաստանի թեմի կողմից կաթողիկոսական ընտրութեան պատգամաւոր գալով Մայր Աթոռս, և ամեն բան անձամբ նկատելուց ու տեսնելուց յետոյ՝ այդ յօդուածով հրաւեր էր կարգում հայ ազգին ուշ գարձնել Մայր Աթոռոյ անշուք և քայլքայուած շինութեանց վերայ, նպաստել բստ կարի այդ անշուք և քայլքայուած շինութեանց վերանորոգման գործին որովհետեւ Մայր Աթոռոյ գանձարանը ոչ միայն հարուստ չէ, այլ աղքատ է։ որովհետեւ փոքրիկ դրամագլուխը, որ գրուած էր արքունի զրամատուն՝ հետզհետէ ջլատվումէ Մայր Աթոռոյ և յատկապէս ձեմարանի ծախըր հոգալու համար։

«Արձագանք» շաբաթաթերթի այս համակրելի և զուտ ճշմարտութիւն յօդուածը Արարատի մէջ արտատպեցինք իժամանակին։ Այդ համակրելի յօդուածի ամփոփումը մէջ բերելով՝ կէտառ կէտ գրումենք մեր տեսութիւնը, յոյս ունենալով որ, թէ «Արձագանք» ի հրաւերը և թէ մեր ձայնը լսելի կը լինի հայ ազգին, և նա օր առաջ եռանդեամբ իւր սրարուղի նուէրը գանձելով Մայր Աթոռոյ ընդհանուր վերանորոգութեան յատկացեալ գանձանակի մէջ, իրաւունք կունենայ պարծել Մայր Աթոռոյ պատոյն վայել շինութիւններով՝ որոնք առհաւատչեայ են լինելու իւր ջերմեռանզն բարեպաշտական զգացման առ Մայր Աթոռն և առնորս մեծ նշանակութիւնն։

Չենք խօսիլ Մայր Աթոռոյս մեծ և համազգային խորհրդաւոր նշանակութեան մասին, որովհետեւ ամեն բանիմաց մարդ զիտէ այդ, այլ իրողութիւնը աչքի առաջ ունենալով կը յաւելցնենք որ, Փրկչի 303 թուին մեր հաւատոյ հայր առաքելանման Ա. Գրիգոր սրարթելի ու Ա. Տրդատ թագաւորի հիմնարկած Մայր Աթոռը այժմ՝ ոչ միայն անշուք է, այլ բոլորովին գծուծ և կա-

րեկցելի վիճակի մէջ է։ Տաճարի որմերը արտաքուստ մաշուած և թափթփուած են, զանազան ժամանակում եղած կարկատան՝ ների պատճառով կորցրած նախկին շուքը՝ ներկայացնումեն մի տիսուր գրգչեակ՝ որի, ինչպէս ասումեն, « մի թելը քաշես հազար կարկատան կը թափուի »։ Կանոնաւոր նորոգութիւն որմերի արել է Դուկաս կաթուղիկոս 1784 թուին, հիման ոանդիսածեւ տատիճաներից վերեւ չորս կարգքարերը միայն շուրջանակի փոխելով։

Տաճարը ներքուսո՞ մի տիսուր աեսարան է կազմում։ Դուսոց պակասութեան պատճառով նսեմութիւնը, խոնաւութիւնը հնացած ծաղկենկարները և ժամանակ առ ժամանակ կատարուած աններդաշնակ մասնաւոր կարկատանները հետղհետէ յերեւան գալով ժամաւորին՝ մոածել են տալիս — միթէ ամենայն Հայոց հայրապետութեան մայր Եկեղեցին այսպէս պէտք է լինէր։ Մարդս կատարելապէս ընդարձանումէ, երբ զժրաղղաքար ականատես է լինում անձրեւի ժամանակ կաթիլքին և ծեփերի՝ խոնաւութիւնից շերտ շերտ կամ թերթ թերթ վայր հոսելուն։ — Մայր տաճարը ներքուստ ծեփել ու ծաղկացրել է Աստուածատուր կաթուղիկոս Համատանցի 1720 թուին, այսինքն 166 տարի սորանից առաջ նորից ծաղկեցրել և Յովնաթան հայ Նկորչի ձեռքով նկարազարդել է Դուկաս կաթուղիկոս 1785 թուին, որի յիշատակը օրհնութեամբ վայելու մենք ահա 101 տարի է։ Տաճարի տանիքը սալարկել է նախ՝ Փիլիսոփոս կաթուղիկոս 1633 թուին, Սիմէօն կաթուղիկոս Երեւանցի՝ 1771 թուին և Եփրեմ կաթուղիկոս՝ 1816 թուին։ Ինչպէս ընթերցազները տեսնումեն, Մայր Տաճարի նորոգութիւնները, բացի տանեաց սալարկից՝ կատարուած են աւելի քան հարիւր տարի առաջ արդեամբ բարեպաշտ ժողովրդոց, այն ժամանակին՝ երբ Հայք ամենայն տեղ բռնութեան և հարստահարութեան նշաւակ էին։

Այժմ, այս լուսաւոր դարումն երբ վայելումենք կատարեալ անդորրութիւն տիրող պետութեանց հայրախնամ՝ կառավարութեան շնորհիւ՝ պատուոյ և ինքնասիրութեան խնդիր պիտի դարձնենք Մայր Տաճարի վերանորոգութեան գործը ըստ ամենայն մասնց։ Այս անշքութիւնը տեսնելով « Արձագանք », պատուական շաբաթաթերթի յարգելի խմբագիրը ասումէ։

« Այժմ . . . Ազգի Հոգեոր Տէրը պիտի գայ իւր Աթուում բազմելու » :

«Նա պիտի ազօթէ իւր հօտի փրկութեան համար այն պատմական տաճարում, որի այժմեան անշուք դրութիւնը աւենելին համազատասխան չէ թէ իւր անցեալ փառաց և թէ ներկայ սերբութիս ինքնասիրութեանը . . . Արքան ամօթ»:

Վեհարան կամ՝ Կաթուղիկոսարանը շինուած է 1741 թուին Դաղար կաթուղիկոս Զահկեցու օրով, Մովսէս կաթուղիկոսի ի լուսարարութեան շինած ներքնայարկների վերայ: Վեհարանը որյափ և չքնաղ յօրինմամբ լինէր սորանից 145 տարի առաջ, ինչոքէս յիշած է արձանագրի մէջ, բայց այժմ թէ իւր հնութեամբ և թէ զանազան անյարմարութեամբ անհամապատասխան է իւր կոչմանը: Այս շինութեան համար է ասում «Արձագանք», յորդելի շաբաթաթերթը:

«Նո (Վեհ. Հայրապետը) պիտի բնակի և նշանառ որ այցելուաց պիտի պատուասիրէ այն խարխուլ և տգեղ շինութեան մէջ, որ Վեհարան է կոչվում: Այս շինութեան համար է ասում «Արձագանք» արդիւնաւոր շաբաթաթերթը»:

Դավարապատը շինել է գարձեալ Դաղար Զահկեցի կաթուղիկոսը 1750 թուին. այս 126 տարու շինութիւնը թէև Ժամանակ առ Ժամանակ վերանորոգուել է, սակայն այժմ հիմնովին նորոգութեան կարօտութիւն ունի: Դաղարապատի համար ևս «Արձագանք» արդիւնաւոր շաբաթաթերթը ասումէ:

«Հիմա հրամայեցէք դէպ ի Դաղարապատ, ուր սովորաբար իջնումեն վանքի հիւրերը: Արքան աղքատիկ, կիսախարիսուլ և միանգամայն աղքային «Տանը» անվայել շինութիւն . . . Պէտք է երեակայել թէ որպիսի տխուր տպաւորութեամբ է հեռանում Դաղարապատի մէջ հիւրասիրուած մերայինը և օտարաղգին»: — Դաղար կաթուղիկոսն է շինել նաև թան ապի կոչեցեալ շինութիւնը՝ Վեհարանի հիւսիսային կողմը դէպի արեւելք երկարացրած, կաթուղիկոսի ձմռան բնակութեան համար: Այդ միայարկ սենեակները այժմ բնակութեան համար անգործագրելի են և յառկացրած են Զենեաան, Վեհարանի սեղանատան և լն:

Շինութիւնը, ուր զետեղուած է Սինօդը՝ շինուած է 1830 թ. սիւնազարդ գաւթի մի մասը այժմ՝ քանդուած է, այս շինութիւնն ևս 56 տարու է, որի մասին «Արձագանք» ում կարդումենք:

«Նա (Հայրապետը) պիտի իշնէ գտնելու և վարձատրելու և պատուիրելու այն աւերակ շենքի մէջ, ուր զետեղուած է Սինօդի առեւանը: Ո՞քան ամօթ»:

Գրադարանի շենքը իբրև շարունակութիւն համբարանոցի՝ շինել է Գաւիթ կաթուղիկոս Ենէգէթեցի, զզրոցները՝ Եփրեմ կաթուղիկոսը, իսկ գահինը՝ ուր յարդարուած է ընթերցանութեան սեղան և այլ պարագաներ՝ և գրատան մուտքի սանդուղը շինել է Գէորգ Դ. կաթուղիկոս: Այս շինութեան համար «Արձագանիք» յարգիլի շաբաթաթերթը ասումէ:

«Նա (Հայրապետը) պիտի մտնէ Գրադարանը անձամբ ծանօթանալու նախնեաց տատուական երկասիրութեանց հետ, բայց բոսէ բոսէ պիտի սպասէ պատի փլչելուն: Ո՞քան աննախանձեմ գրութիւն»:

Միարանութեան սենեակները շինել է Մովսէս կաթուղիկոս Խոտանանցի իւր լուսարարութեան ժամանակին սկսեալ 1627 թուին:

Այդ աւելի քան 250 տարու շինութիւնները եթէ ժամանակին տեսողաց՝ իրանց հոյակապութեամբ զարմացուցիչ լինէին, այժմ զարմացուցիչ են թէ ինչպէս մարդիկ կարողանում են ընակել նոցա մէջ. որովհետեւ անձկութիւնը մի կողմից, մթութիւնը մի կողմից և խոնաւութիւնը միւու կողմից պատկերացնումեն «խուց» կոչեցնալ սենեակի կատարեալ տիպ: Այս սենեակների արեւելեան մասը նոր ի նորոյ շինել է Փիլիսպոս կաթուղիկոս՝ յաջորդն Մովսէսի Խոտանանցւոյ, իւր շինած սենեակների վերայ կատուցանելով իւր կաթուղիկոսարանիը: Այս կաթուղիկոսարանի տեղ, որ քայքայուած է եղել՝ Եփրեմ կաթուղիկոս 1813 թուին շինել է դպրոց՝ որ այժմ՝ ժամէ ժամ՝ փլչել է սպասվում յահ և իսարսափ մէջը բնակողների:

Միարանութեան սենեակների համար «Արձագանիք» շաբաթաթերթը ասումէ:

«Նա (Հայրապետը) ողիտի չկարողանայ իւր շուրջը ժողովել և համախմբել Ս. Էջմիածնի մէջ գիտնական և զարգացած կրօնաւոր և աշխարհական անձինք — նախ և առաջ չը կարողանալով տալ դոցա մի վայելուչ բնակորան, Ո՞քան ցաւալի բան».

Ճեմարանը շինել է բարեյիշատակ Գէորգ Դ. կաթուզիկոս ուր ձրի գտատիարակութիւն և սնունդ են սոտանում՝ մօտ 200 աղքատ զիշերօթիկ մանուկիներ։ Ճեմարանը սրչոփ և արտաքուստ աչքի բնինող մի շինութիւն է երեւում, բայց ներքուստ՝ դպրոցի յարմարութիւն ունենալու համար մեծ փոխոխութեան կարօտ է։ (որովհետեւ գտատիարանները փաքր են, լուսամուտները անյարմար և սենհակները շինուած լինելով ընդ հիւսիս և ընդ հարաւ, ձեւուր՝ հիւսիսային կողմի սենհակները՝ սառնամանիք են ներկոյացնում, թող մժութիւնը, ամառը հարաւ այնոնք ընոց, բաց յայտանիկ վառարանները անյարմարութեամբ բոլորուին անպէտք լինելով՝ թիթեղեայ վառարաններով են տոքանում սենհակները)։ Այս տմեն անյարմարութիւնները այնպէս նկատելի են, որ օր տաջ կարգի դրուելու ջանքը առ աջին հոգու է գարձած։

Ճեմարանի համար ևս միայն զրամական տագնապը աչքի առաջ տնենալով՝ Արձագանք « պատուական շարաթաթերթը տսումէ։

« Ակրօտապէս, նոյն իսկ Աթոռու մոտած օրը նա (Հայրապետը) սիստի լսէ քանի մի հարիւր մանկանց լացը, որոնց համար տոփուած սիստի լինի Ճեմարանը գոյել իւր գաները միջացները սպառելու պատճառաւ։ Արքան անառանկիլի գրութիւն»։

« Այսպիսի մի աննախանձելի զիճակ է սպառնում նորընտիր Ծայրագոյն Պատրիարքին և Կաթուզիկոսին տմենայն Հայոց։

Յատ երացնումէ « Արձագանք » պատուական շարաթաթերթը։ « Ա. Կօմիածնի տաճարը վերանորոգել պէտք է — զանքի գանձարանում զրամ չկայ, մենարանը և Ա. Ալիօղը շինել պէտք է — գարձեալ զրամ չըկայ։ Գրասան ճաքճաքուած պատերը վերցնել պէտք է — նոյնողէս զրամ չըկայ։ Միարանութեանը պատշաճառոր բնակարաններ տալ հարկ է — Վանքը միջոց յտնի։ Այցելուաց և հիւրերի ընդունելու համար Վաղարապատը պէտք է նորագել յայտնի չէ թէ որ ապրիւրից»։

« Գէորգիան Ճեմարանի գոյւթիւնը, յարասեռթիւնը և սայշառութիւնը, հինգ միլիոն հայ աղքի կարիքն է և պատույ խընդիր — իսկ գորան ներկայումն նիւթական տագնապ է սպառնում։ Խնչ կարող է անել սպազիսի զրութեան մէջ աղքիս բաղձակի Վեհապատ Կաթուզիկոսը»։

Արձագանք՝ արդիւնաւոր շաբաթամերթի յարգելի խմբագիրը կամ չէ նկատել կամ մռացել է գրել որ բարեյիշատակ Վուկաս կաթուղիկոսի 1791 թուին շինած Համբարանոցը, որ ամառնային սեղանատան վերայ է, խախտած է, և վլչելու վտանգ է ոպտավում ոչ միայն Համբարանոցին այլ և նորա տակը գտնուող ամառնային Անդանատանը:

Ուրեմն ամառնային սեղանատանը և նորա վերայ շինած Համբարանոցը ինորոյ շինելու է — գանձարանում՝ զրամ ցըկաց:

Ընթերցողք կարգալով այս կենթապրեն, ուրեմն Եջմիածնում հաստատունք շէնք չէ մնացել. ուրեմն ինչ են արել վերջին կաթուղիկոսները:

—Վերջին նշանաւոր շինարար կաթուղիկոս եղել է Վուկաս կաթուղիկոս։ Բայց նորա յաջորդներն եւս անզործ չեն մնացել. նոյն ինքն Դուիթ Էնէգէթեցի, որ այնքան խուժութեանց տեղի տուեց զարուս ուղղի տասնտեսակում։ Վուկասի շինած Համբարանոցի պակասորդը լրացրեց, երեք կամարներ եւս կառուցանելով մինչեւ Վեհարան. ինչպէս լիշեցինք՝ Նիգր մ՝ կաթուղիկոս իւր տառապալից իշխանութեան ժամանակ նախքան առանդելը այլ եւ այլ տեղեր, նորոգել է Մայր Տաճարի տանեաց սոլոյատակը և շինել է հին ժառանգաւորայ վարժարանը։

Ցոլհաննէս ը. Կարբեցի ծախսիք եզիալտապնակ Սահակ Խէլջայեանից վերաշխնեց Վաղարապատի արեւմտեան կողմի երեք սենեակները. Համբարեալ սորա նախաձեռնութեամբ շինուեց ներսի Վաղարապատի տեղը այժմեան Սինօդի սիւնազարդ շինութիւնը։ Մայր Ամեուը ազատեց պարտքից և մի պատկառելի գումար եւ յետ ձգեց։

Ներսէս Կաթուղիկոս՝ վահրի պարխոսք անտօնանոցի անմաքրութիւնից մաքրելու համար, շինեց այժմեան գոմանոցը պարսպից դուրս, որ իւր կանոնաւորութեան համար պլան է կոչվում. տնկել տուեց անտառը և շինեց լիճը։

Մատիմէսս կաթուղիկոսի օրով շինուեց նոր շուկայ՝ որ առաջ Մայր Ամեուոյ արտաքին գաւիթումն էր. հին շուկայի տեղ տպարանի շինութեան հիմն ձգուեց, հին գոմանոցի տեղ նոր վարժարան շինելու համար հիմն փորուեց, բայց կաթուղիկոսի մահը 1865 թուին արգելք եղաւ այս շինութեանց ի գլուխ գալուն։

Գէորգ. Գ. Աաժուղիկոս Մայր Տաճարին կից Թանկարանը և Ճեմարանը շինեց. փայտաշէն մի դահլիճ պատրաստեց Գրատան առաջ՝ ընթերցանութեան համար. Անտառը ընդարձակեց արեմուհան կողմից և Մայր Աժուղոյ ու գիւղի մէջ եղտծ ազրիւների կոյտ տարածութիւնը հասարակաց պարտէզի վերածեց. Նինեց և Բիրականի հայրապետական ամարանոցը՝ բաւական ընդարձակ գետին շուրջանակի ողարսովելով և ծառաստաններ պատրաստելով:

Մեր ոյս տեսութիւնը կը վերջացնենք Հրաւէր կարգալով առ բալոր հայասեռ ժողովուրդը որ նոքա իրանց նոտինեաց բարեպաշտութեանն և առաքինութեանն ևս ժառանգը լինելով՝ իրանց կամաւոր նուերը հաճին ձգել այն գանձունակի մէջ, որ պիտի յատկանոյ Ա. Էջմիածնի վերանորոգութեանց, որ անյիտաձեկի է այժմ: Այս նուիրատուութիւնը հարկուոր է, որովհետեւ ըստ Արձագանք «ի»

«Յոյս զնել Ա. Էջմիածնի գանձարանի վերայ անկարող է նու ով որ իմօտոյ ծանօթ է Աթուսի սովորական եկամուտներին: Ի հարկէ, կարելի է այդ եկամուտներից շատերը բարգաւաճել, կարելի էր բարեկարգութեամբ և խնայողութեամբ տռատացնել վանքական անձուկ գանձարանը—բայց այդ բոլորը երթէք չէ կարող հասնել այն աստիճանին, որ Աթուուը առանց արտաքին օգնութեան կարողանար բաւականութիւն տալ գէթ վերոյիշեալ անհրաժեշտ ուահանջներին, ուր մնաց որ դոցանով չէ կարող բաւականանալ նորընտիր Հայրապետը»:

Ներկոյ Վ. Ե. Հ. Հայրապետը, որ վերջին զարուս Հայրապետների մեծագործութեանց ականատես և շատ դէպքում աջակից է եղել իզձ ունի թէ այդ մեծագործութիւնները մշտնջենաւորել պատշաճաւոր վերանորոգութիւններով և թէ նորանոր շինութիւններ ոնել բայց գժրազդաբար Մայր Աթուույ գանձարանի վերայ յոյս զնել անկարելի է: Մենք Հայերս, մեր Հայրերի ու պապերի յիշատակը վերանորոգելու և իբրեւ նոցա հարազատ որդին՝ նոր նոր յիշատակաւ փայլելու համար ըստ խնայինք մեր լուման, այդ լումայով բարեկամուցնելով մեզ հետ թէ Աստուծուն և թէ մեր ներկայ ու ապագայ սերունդը: